

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՐՍԻ ԼԵԶԱՅԱՐՈՐԴԱԿՑԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱԶԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ *

ՀՏԴ 801.7

DOI: 10.52063/25792652-2024.3.22-144

ՎԱՐԴՈՒՅԻ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԵՊԲՅ օտար լեզուների ամբիոնի դասախոս,
ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի
անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

varduhi.ghukasyan@ysu.am

ORCID: 0009-0008-6878-1313

Ներկայացվող հոդվածի նպատակն է բացահայտել դիվանագիտական փաստաթղթերին բնորոշ լեզվական և լեզվահաղորդակցական առանձնահատկությունները: Ներկայումս ավելի ու ավելի է մեծանում հետաքրքրությունը դիվանագիտական դիսկուրսի ուսումնասիրության նկատմամբ լեզվաբանական տեսանկյունից, քանզի դրա լեզվական առանձնահատկությունների վերլուծությունը կարևոր նշանակություն ունի միջազգային արդյունավետ փոխգործակցությունը զարգացնելու առումով: Միջազգային հարաբերությունների բոլոր ոլորտներում մեծանում է հետաքրքրությունը դիվանագիտական լեզվի ուսումնասիրության նկատմամբ, իսկ գլոբալացման պայմաններում ընդհանուր դիվանագիտական մշակույթ ձևավորելու խնդիրն այսօր, առավել քան երբևէ, արդիական է:

Հետազոտության ընդհանուր նպատակով պայմանավորված՝ առաջադրվել են հետևյալ խնդիրները. տարբերակել և նկարագրել դիվանագիտական փաստաթղթերին բնորոշ գծերը, ուսումնասիրել դիվանագիտական հաղորդակցության լեզվական միջոցները:

Հետազոտության խնդիրներով ու վերլուծվող նյութի առանձնահատկություններով պայմանավորված՝ որպես ուսումնասիրության հիմնական մեթոդներ են ընտրվել նյութի անմիջական դիտարկման մեթոդը, համատեքստային-մեկնաբանական մեթոդը, ինտենտ վերլուծության մեթոդը, բովանդակության (կոնտենտ) վերլուծության մեթոդը:

Հետազոտության շրջանակներում կատարված հիմնական եզրահանգումն այն է, որ դիվանագիտական գրագրության ոճը փոփոխվում է՝ կախված տարբեր երկրների լեզվից ու ավանդույթներից, բայց և այնպես ենթակա է որոշ ընդհանուր կանոնների, որոնք սահմանվում են միջազգային պրակտիկայով ու պայմանականություններով: Ցանկացած դիվանագիտական փաստաթուղթ պետք է հաղորդի պետության տեսակետը և լեզվի նկատմամբ անբավարար ուշադրությունը կարող է էական վնաս հասցնել կողմերի միջև հարաբերություններին:

Հիմնաբառեր՝ դիվանագիտական գրագրություն, դիվանագիտական դիսկուրս, դիվանագիտական հաղորդակցություն, միջազգային հարաբերություններ, հաղորդակցման գործընթաց, միջազգային փաստաթղթեր, դիվանագիտական լեզու, անձնական նոտա, վերբալ նոտա, հուշագիր:

* Հոդվածը ներկայացվել է 06.07.2024թ., գրախոսվել՝ 31.07.2024թ., տպագրության ընդունվել՝ 31.10.2024թ.:

Ներածություն

Հաղորդակցության հիմնախնդիրը ժամանակակից գիտության մեջ գլխավորներից է և գիտնականների խիստ սևեռուն ուշադրության ներքո է: Տվյալ գիտաճյուղում ուսումնասիրությունների չափազանց մեծ բազմազանությամբ է պայմանավորված այս երևույթի ընդգրկումն ու անհատի և հասարակության անմիջական կապը: Դիվանագիտական դիսկուրսի հետազոտման հիմնական խնդիրն է պարզել դրա գլխավոր առանձնահատկություններն ու տարբերությունները հաղորդակցության այլ տեսակներից: Դիվանագիտական շփումների գծապատկերը համառոտ կարելի է ներկայացնել այսպես. ո՞վ է ասում, ի՞նչ է ասում, և ի՞նչ նպատակով է ասում խոսողը: Ուղին, այսինքն՝ միջոցը, որով դիվանագիտական միջավայրում հաղորդակցությունն ուղարկողից փոխանցվում է հաղորդակցությունը ստացողին, դիվանագիտական նամակն է կամ դիվանագիտական մեկ այլ փաստաթուղթ: Արդյունավետ հաղորդակցության համար անհրաժեշտ է ճիշտ վերծանել հաղորդագրությունը:

Դիվանագիտական դիսկուրսի հիմնական նպատակը հակասություններն անկոնֆլիկտ, խաղաղ ճանապարհով լուծելն է: Դրան կարելի է հասնել՝ օգտագործելով լեզվական մի շարք հնարներ, որոնց բնորոշ են հակիրճությունը և ձևակերպումների հստակությունը: Դիվանագիտական դիսկուրսին հանդիսավորություն հաղորդելու համար հաճախ օգտագործում են ոճական հնարներ, դիվանագիտական քաղաքավարության ձևեր: Հաշվի առնելով դիվանագիտական լեզվի առանձնահատկությունները, որին բնորոշ է կանոնակարգվածությունը, հաղորդակցության մասնակիցների մտադրություններն արտահայտելու համար ռազմավարական առումով կարևոր լեզվական միջոցների ընտրությունը բավականին սահմանափակ է (Dontcheva-Navratilova 2005): Ինստիտուցիոնալ և, մասնավորապես, դիվանագիտական դիսկուրսում հաղորդակցության մասնակիցների կողմից լեզվական միջոցների ընտրությունը պայմանավորված է իրավիճակային համատեքստով, ուստի համարվում է, որ ինստիտուցիոնալ դիսկուրսում լեզվական հնարները թելադրված են ժանրային առանձնահատկություններով: Գործառույթը, որը լեզուն կատարում է հաղորդակցման գործընթացում, պայմանավորված է արտահայտման տեսակով և բառապաշարի ընտրությամբ: Կախված հաղորդակցության մասնակիցների հետապնդած նպատակներից՝ առանձնացվում են հայտարարությունների հետևյալ տեսակները՝ *հաղորդագրություն, կարծիք, դատողություն, երաշխավորություն, խորհուրդ, քննադատություն, հաճոյախոսություն, առաջարկ, եզրակացություն, ամփոփում, հարց, պատասխան* (Ammon 2001):

Այսպիսով՝ դիվանագիտական դիսկուրսի լեզվահաղորդակցական և գործաբանական բնութագիրը, մի կողմից, տեղեկատվությունը հաղորդելն ու պահպանելն է, իսկ մյուս կողմից՝ հասցեատիրոջ գիտակցության վրա ներգործելը, ուստի դիվանագիտական դիսկուրսն ունի որոշակի նպատակաուղղվածություն: Դրան բնորոշ են կազմակերպման իր պայմանները, ինչպես նաև հաղորդակցական ձևերն ու միջոցները: Ելնելով դրանից՝ դիվանագիտական հաղորդակցությունը սահմանվում է որպես ճանաչողական հաղորդակցություն (անհրաժեշտ տեղեկատվության փոխանցում), համոզական հաղորդակցություն (արժեքային կողմնորոշումների ու դիրքորոշումների ձևավորում), արտահայտչական հաղորդակցություն (անհրաժեշտ գործողության դրդում), ներգործական հաղորդակցություն (ներգործություն շարժառիթների, դիրքորոշումների, վարքագծի և հարաբերությունների փոփոխության նպատակով), արարողակարգային հաղորդակցություն (պայմանական հարաբերությունների ամրապնդում և պահպանում) (Володина, Карпухина 2002):

Դիվանագիտական հաղորդակցության նպատակն ու իրավիճակը պայմանավորում են հաղորդակցության առանձին խոսքային գործողություններ ու ժանրերի ընտրությունը:

Միջազգային փաստաթղթերի վերլուծությունը ցույց է տալիս, որ գործնականում երկրի «շահերի պաշտպանություն» հասկացությունը հաճախ վերափոխվում է իրենց գործընկերների նկատմամբ վերահսկողություն հաստատելու խնդրի: Հետևաբար, դիվանագիտական դիսկուրսին բնորոշ է մտաշահարկման տարրը՝ հասցեատիրոջ գիտակցության վրա ներգործությունը, իսկ դիվանագիտական հաղորդակցությունը մտաշահարկային երկխոսություն է, որը ենթադրում է գրուցակցի քողարկված կառավարումը, հասցեատիրոջ գործունեության կարգավորումը, նրան անհրաժեշտ գործողությունների դրդելը՝ ներշնչելով այդ գործողությունների անհրաժեշտությունը կամ դրանց տեղին լինելը հատուկ նշույթների միջոցով, այսինքն՝ բացահայտորեն, ինչպես նաև անուղղակիորեն՝ տերմինների հարանշանակության, դիսկուրսի տոնայնության, գնահատողական բառապաշարի ընտրության միջոցով (Терентий 2010): Պետք է նշել, որ դիվանագիտական դիսկուրսի ուսումնասիրությունն անհրաժեշտ է ոչ միայն համապատասխան սոցիալական խմբի վրա հասցեագրողի խոսքի ազդեցության օպտիմալ ուղիներ գտնելու տեսանկյունից, այլև գրուցակցի/հասցեատիրոջ կողմից լեզվական մտաշահարկման իրական մտադրություններն ու քողարկված հնարքները բացահայտելու նպատակով: Դիվանագիտական դիսկուրսում չափազանց տարածված են այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են կանխամտածված անորոշության և քաղաքական կոռեկտության ստեղծումը: Այս տեխնիկայի նպատակը, որպես կանոն, կոնֆլիկտային իրավիճակից խուսափելն է: Իր աշխատություններում Դ. Կրիստալը խոսում է այսպես կոչված «կես ստի և կես ճշմարտության» երկիմաստ լեզվի մասին (Crystal 1995, 378), որի նպատակն է խուսափել ստի և անհիմն հայտարարությունների հնարավոր մեղադրանքներից: Նմանատիպ մարտավարություն կիրառվում է դիվանագիտական հաղորդակցության մեջ, երբ դիվանագետներից պահանջվում է խուսափել կոնֆլիկտից, փրկել հեղինակությունը:

Դիվանագիտական դիսկուրսի մյուս հատկանիշը «լրացուցիչ», «պատահական» բառերի բացակայությունն է: Սա դիվանագիտության լեզվի պարտադիր պայման է, քանի որ ասվածը հասցեատիրոջ կողմից պետք է մեկնաբանվի ճիշտ այնպես, որ ձեռնտու լինի հասցեատիրոջը: Քաղաքական խոսույթում, հաճախ նախապատվությունը տրվում է պարզ խոսքին, որպեսզի ասվածը հասկանալի լինի հասարակության յուրաքանչյուր անդամի համար: Դիվանագիտական տեքստերում, ընդհակառակը, լեզուն լի է գրքային, պաշտոնական բառապաշարով: Այնուամենայնիվ, անհնար է լիովին բացառել խոսակցական բառերի ներթափանցումը դիվանագիտական հաղորդակցություն:

Դիվանագիտական գրագրության առանձնահատկությունները

Դիվանագիտական գրագրության ոճը վերաբերում է դիսկուրսի ինստիտուցիոնալ, կարգավիճակային ուղղվածությամբ տեսակին: Դիվանագետների գրագրությունը ենթարկվում է միջազգային պրակտիկայով և համաձայնագրերով սահմանված ընդհանուր կանոններին: Միևնույն ժամանակ, նշյալ ոճը փոխվում է՝ կախված տարբեր երկրների լեզվից և ավանդույթներից: Այսպես, դիվանագիտական գրագրության լեզվում կարելի է առանձնացնել ընդհանուրն ու մասնակին, վերագրելն ու ազգայինը: Դիվանագիտական գրագրության նպատակն է որոշակիորեն ներգործել հաղորդակցողի վրա: Ելնելով դրանից՝ փաստաթուղթը կազմողը պետք է հաշվի առնի տվյալ հաղորդակցության հիմնական առանձնահատկությունները, ընտրի դրան առավել հարիր կառուցվածք և տեղեկատվությունը փոխանցելու ծածկագրման այնպիսի միջոցներ, որոնք

կօպտիմալացնեն հաղորդակցման գործընթացը և կօգնեն խուսափելու տեղեկատվության կորստից: Հարկ է նշել, որ պետության արտաքին քաղաքականությունը վարելու գործընթացում ներգրավված են երկրի քաղաքական կամ դիվանագիտության ինստիտուտի ներկայացուցիչներ (Ալթունյան 2023): Նրանք դիվանագիտական դիսկուրսում կատարում են հասցեագրողի դեր: Իսկ դիվանագիտության ինստիտուտի ներկայացուցիչները կամ հասարակության ներկայացուցիչներն ընդհանուր առմամբ դիվանագիտական դիսկուրսի հասցեատերերն են (Демьянков 2002): Դիվանագիտության, հետևաբար և դիվանագիտական դիսկուրսի խիստ ու լակոնիկ բնույթը մասնակիցներին պարտավորեցնում է հստակ ու համակարգված պահպանել գրագրության ազատության որոշակի տարածք:

Այստեղ անընդունելի է որպես անհատ հանդես գալ, քանի որ դիվանագետը կառույցի ներկայացուցիչ է և ունի հասարակական դիրք: Այս գործընթացում դիվանագետի կարծիքն ու անձնային որակները հետին պլան են մղվում (Wheeler 2018): Այսպիսով, դիվանագիտությունը ծառայություն է, որը պահանջում է խիստ կարգապահություն, և ցանկացած դիվանագիտական փաստաթուղթ պետք է արտահայտի պետության շահերը և տեսակետը:

Դիվանագիտական փաստաթղթերը կարող են նախատեսված լինել սեփական կառավարության կամ մեկ այլ պետության ներկայացուցիչներին փոխանցելու համար: Ուստի դիվանագիտական փաստաթղթերը կարելի է բաժանել երկու մեծ խմբի՝ *ներքին և արտաքին* (Демьянков 2002): Պետությունների դիվանագիտական փաստաթղթերի զգալի մասը ներգերատեսչական բնույթ ունեն: Մեկ այլ կատեգորիա են ներկայացնում այն փաստաթղթերը, որոնց միջոցով պետությունների միջև գրավոր պաշտոնական հաղորդակցություն է իրականացվում և արտահայտվում պետության դիրքորոշումն այս կամ այն հարցի վերաբերյալ: Նշյալ փաստաթղթերը գրվում են *դիվանագիտական լեզվով*: Ինչպես հետևում է անվանումից, դա այն լեզուն է, որով իրականացնում են պաշտոնական դիվանագիտական հարաբերությունները և վարում են բանակցությունները: Այն ներառում է արտահայտություններ, կադապարներ և հատուկ տերմիններ, որոնց ամբողջությունն էլ հենց համընդունելի դիվանագիտական բառապաշարն է: Դիվանագիտական ոճը պետք է առաջին հերթին առանձնանա պարզությամբ և հստակությամբ:

Դիվանագիտական դիսկուրսի նպատակն ու ենթանպատակները իրականացվում են տարբեր ժանրերում, որոնք, ըստ հաղորդակցության ձևի, բաժանվում են երկու մեծ խմբի՝ *գրավոր և բանավոր*: Տեղեկացնելու նպատակն իրականացվում է *գրավոր* այնպիսի ժանրերում, ինչպիսիք են *անձնական նոտան, պետության կամ կառավարության ղեկավարի անձնական ուղերձը, վերբալ նոտան, հուշաթերթիկը, հուշագիրը, պետությունների ղեկավարների, կառավարությունների և արտաքին գործերի նախարարների համատեղ հայտարարությունը, հռչակագիրը, կոմյունիկեն* (United Nations Correspondence Manual 2000):

Ներքին նամակագրությունը բնութագրվում է հակիրճությամբ, պարզությամբ և միանշանակությամբ: Արտաքին նամակագրությունը, բացի պարզությունից և միանշանակությունից, պետք է նաև դրսևորի զգուշություն, տակտ, զսպվածություն, օգտագործված տերմինների իմացություն:

Դիտարկենք անձնական նոտայի օրինակ: Անձնական նոտան ուղարկվում է կարևոր և սկզբունքային նշանակության հարցերի հետ կապված կամ պարունակում է տեղեկատվություն որևէ խոշոր իրադարձության մասին: Վերջին տարիներին լայն տարածում է գտել դիվանագիտական նամակագրության այնպիսի տեսակ, ինչպիսին է պետության կամ կառավարության ղեկավարի անձնական նոտան: Նկատի առնելով ուղարկողի և ստացողի բարձր դիրքը, ինչպես նաև նման փաստաթղթերի

նշանակությունը՝ ընդունված է դրանք առանձնացնել որպես դիվանագիտական նամակագրության առանձին տեսակ: Դրանք բնորոշ են որոշ ձևային հատկանիշներ, որոնք պետք է պահպանվեն:

- Նոտան գրվում է առաջին դեմքով և տպագրվում է Նոտայի ձևաթղթի վրա,

- վերին աջ անկյունում գրվում է այն քաղաքի անվանումը, որտեղից այն ուղարկվել է (մայրաքաղաք), և առաքման ամսաթիվը:

Անձնական Նոտայի տեքստը սկսվում է դիմումով, ավարտվում է հաճոյախոսությամբ: Պետական կարգավիճակ կամ ռազմական, դիվանագիտական և կրոնական աստիճան ունեցող պաշտոնյաներին դիմելիս սովորաբար անունները չեն հիշատակվում: Դիմում են՝ պրն. Նախագահ (Mr. President), պրն. վարչապետ (Mr. Prime Minister), պրն. գեներալ (Mr. General): Վարվելակարգը Նախատեսում է Նաև հետևյալ ուշագրավ սրբությունը. պաշտոնատար անձին դիմելիս սովորաբար փոքր-ինչ «բարձրացնում են» նրա պաշտոնը: Կնոջը ցանկալի է դիմել ամուսնու ազգանունով՝ օրինակ Mrs. Macron: Հատկապես ուշադիր պետք է լինել տղամարդկանց և կանանց դիմելիս այն երկրներում, որտեղ պահպանվում են ազնվական կոչումները, որոնք պարտադիր են այս կամ այն անձի հետ շփվելիս: Եթե ազնվական կոչումը նվազեցվում է, ապա դա կարող է գնահատվել որպես համապատասխան անձին վիրավորելու դիտավորություն, ում համար Նախատեսված է այդ Նոտան: Ճիշտ դիմելաձևերի ընտրությունը դիվանագիտական գրագրության մեջ օգնում է մարդկանց հետ շփվել քաղաքավարության Նորմերի շրջանակներում: Դիմելաձևն ընտրելիս պետք է հաշվի առնել անձի պաշտոնական և քաղաքական դիրքը կամ աստիճանը:

Դիմումից հետո տպագրվում է տեքստը, բացառությամբ այն Նոտաների, որոնք ցավակցություն կամ բողոք են պարունակում: Տեքստի վերջում արտահայտվում է հարգանաց հավաստիքը. դա պաշտոնական ձև է, բայց կարևոր տարր է:

Գրության վերջում հաճոյախոսության ձևը կախված է հասցեատիրոջ կարգավիճակից և նրա հետ հարաբերությունների բնույթից: Ժամանակակից գրագրությանը բնորոշ է խոսակցական ոճն օգտագործելու միտումը, թեև այն դեպքերում, երբ պահանջվում է պաշտոնական ոճ (պաշտոնական նամակներ, մասնավոր նամակներ, կիսապաշտոնական բնույթի նամակներ), կիրառվում են սահմանված արտահայտություններ, բառային կառույցներ և քերականական ձևեր, որոնք ընդունված են դիվանագիտական գրագրության մեջ:

Հաճոյախոսություններ շարադրելու առանձին երկրների արարողակարգային պրակտիկան ունի իր առանձնահատկությունները, որոնք կարող են տարբերվել ընդհանուր ստանդարտներից: Նոտա ուղարկողի անձնական ստորագրությունը դրվում է հաճոյախոսությունից հետո և պետք է լինի ընթեռնելի: Առաջին էջի ստորին ձախ անկյունում գրվում է այն անձի հասցեն, որին ուղղված է Նոտան: Նոտաներում օգտագործվող քաղաքավարական ձևակերպումների ու դարձվածքների շրջանակը շատ լայն է: Դա հնարավորություն է տալիս Նոտային հաղորդելու անհրաժեշտ խստության կամ, ընդհակառակը, ջերմության երանգ: Խուսափում են կտրուկ ոճից, երկիմաստ հռետորաբանությունից, ակնարկներից, հապավումներից: Նույնիսկ եթե գրվում է բողոքի Նոտա, ապա հաշվի է առնվում, որ այն կարող է չընդունվել ավելորդ խստության պատճառով, ինչը կհանգեցնի կոնֆլիկտի և կառաջացնի հետևանքներ, որոնք դժվար է կանխատեսել: Անձնական Նոտան ներառում է կարևոր և սկզբունքային հարցեր, օրինակ՝ տեղեկություններ պետության անվանման փոփոխության, երկկողմ հարաբերությունների հարցերի վերաբերյալ, ինչպես նաև ուղարկվում են անձնական Նոտաներ գործընկերներին հավատարմագրեր հանձնելու, ժամանակավորապես բացակայելու և գործերի ժամանակավոր հավատարմատար նշանակելու, արարողակարգային հարցերի վերաբերյալ, շնորհավորանքներ, ցավակցություններ:



Վերոբերյալ փաստաթղթում Փոլ Բիյան՝ Կամերունի նախկին նախագահը, իր շնորհավորական ուղերձն է հղում Ռիշի Սունակին՝ Միացյալ Թագավորության վարչապետ և Պահպանողական կուսակցության առաջնորդ ընտրվելու կապակցությամբ:

Վերևում փաստաթղթի մեջտեղի հատվածում, տեսնում ենք Կամերունի գլխանշանը, ձախ անկյունում գրված՝ Կամերունի Հանրապետություն (*The Republic of Cameroon*), իսկ աջում նշված է, թե այն երբ է գրվել:

Առաջին հանգամանքը, որը հարկ է մատնանշել, տեքստը շարադրված է առաջին դեմքով, որը, ինչպես նշվեց վերևում, բնորոշ է նման փաստաթղթերի ոճին: Ինչ վերաբերում է նախաբանին և վերջաբանին, փաստաթուղթը սկսվում և ավարտվում է քաղաքավարական դիմելածներով. ...*Mr Prime Minister*; ...*To the Right Honourable Rishi Sunak*:

Բուն հատվածի առաջին մասում, տվյալ պաշտոնին նշանակվելու կապակցությամբ շնորհավորելիս, Փոլ Բիյան օգտագործում է *sincere and warm* ածականները՝ ավելի ջերմ և մտերիմ երևալու համար: Նա նաև նշում է Նորին Մեծություն թագավոր Չարլզ III-ի անունը՝ շեշտելու ևս մեկ անգամ Ռիշի Սունակի նշանակված պաշտոնի կարևորությունը:

Երկրորդ մասում Փոլ Բիյան, օգտվելով առիթից, ցանկանում է էլ ավելի ամրապնդել երկու երկրների միջև գոյություն ունեցող դիվանագիտական կապը՝ այն անվանելով բարեկամական և համագործակցային՝ ... *while wishing you a successful tenure of office, I avail myself of this solemn occasion to assure you of my readiness and*

that of my Government to work towards consolidating and fostering further the excellent ties of friendship and cooperation existing between our two countries:

Բառապաշարային տեսանկյունից նկատում ենք պաշտոնական լեզու՝ հարուստ դիմելաձևերով, ինչպես հարիր է նմանատիպ փաստաթղթերին: Այսպես՝ *Right Honorable, Mr Prime Minister, my highest esteem* և արդեն իսկ քարացած կառույցներ, ինչպես օրինակ՝ *sincere and warm congratulations, accept the assurances*.

Ուղերձը ավարտվում է անձնական նոտային բնորոշ քաղաքավարական դիմելաձևով՝ *...accept, Mr Prime Minister, the assurances of my highest esteem*: Ներքևի հատվածում արդեն տեսնում ենք ստորագրությունը և թե ում է ուղղված ուղերձը:

Դիվանագիտական լեզվի համար չափազանց կարևոր է միջազգային դիվանագիտական զանազան բառապաշարի և միջազգային իրավունքի տերմինաբանության օգտագործումը: Դիվանագիտական տերմինաբանության բառափմաստային խումբը հիմնականում ներառում է լատիներեն (**alternare, de facto, de jure, expansio, denatura, pacta sunt servand, pro et contra, sine qua non, status quo ante bellum, post factum** և այլն) կամ ֆրանսերեն (**agrement, depeche, denonciation, demarcation, p. r. (pour remercier), p. f. (pour féliciter), p. c. (pour condoléance), p.p.c. (pour prendre congé)** և այլն) տարբեր բառեր ու տերմիններ: Դա պայմանավորված է նրանով, որ երկար ժամանակ միջնադարում դիվանագիտության լեզու է եղել լատիներենը, որին հաջորդում է ֆրանսերենը: Օտարալեզու բառապաշարի օգտագործումը դիվանագիտական տերմինաբանության զարգացման ակտիվ ուղիներից է հատկապես գլոբալիզացիայի շրջանակներում: Դիվանագիտական ենթաոճի ժանրերն ունեն արտահայտված լեզվական առանձնահատկություններ: Այսպիսով՝ դիվանագիտական փաստաթղթերում հաճախ կարող են օգտագործվել այնպիսի բառեր, որոնք համարվում են «գրքային»: Նման բառերը հանդիսավոր ինչեղություն են հաղորդում դիվանագիտական փաստաթղթերին:

Հաճախ դիվանագիտական փաստաթղթերում կարելի է գտնել առանձին հատվածներից բաղկացած նախադասություններ, որոնք արտահայտում են որոշակի ամբողջական միտք և ձևակերպված են պարբերության տեսքով, բայց միևնույն ժամանակ պաշտոնապես ներառված են մեկ նախադասության մեջ և միմյանցից չբաժանված կետերով: Տեքստի կառուցման այս ոճը կարելի է տեսնել, օրինակ, ՄԱԿ-ի կանոնադրության նախաբանում և դիվանագիտական նամակագրության մեջ: Բացի վերը նշված հատկանիշներից՝ դիվանագիտական փաստաթղթերի շարահյուսական կառուցվածքը բնութագրվում է բոլոր տեսակի պայմանական նախադասությունների և դիվանագիտական վարվելակարգի և տակտի պահանջներին համապատասխանող ճկուն ձևակերպումների օգտագործմամբ: Դիվանագիտական փաստաթղթերում հրամայական ձևերը տեղին են միայն հատուկ, բացառիկ դեպքերում, օրինակ՝ բողոքի նոտաներում կամ վերջնագրերում: Դիվանագիտական նամակագրության մեջ պետք է խուսափել այնպիսի արտահայտություններից, ինչպիսիք են՝ *«Ձեր իշխանությունը պետք է», «Ձեր երկիրը պարտավոր է»* և այլն: Դիվանագիտական հաղորդակցության մեջ անընդունելի են բոլոր տեսակի կոշտ արտահայտությունները, բարձր տոնայնությունը, վիրավորական համեմատությունները, ծաղրը, հեգնանքը այլ պետության նկատմամբ: Նման լեզվական ձևեր պարունակող փաստաթղթերը չեն կարող ընդունվել (Ոոսոբ 2000, 134): Եթե դիվանագիտական նամակագրության մեջ կողմերից մեկը կարիք ունի արտահայտելու անհամաձայնություն կամ բացասական գնահատական, ապա դա պետք է մեղմել զանազան կառույցներով: Դիվանագիտական լեզվի նման լեզվական առանձնահատկությունները նպաստում են փաստաթղթի նպատակին հասնելուն և միջպետական հարաբերությունների շրջանակներում բազմաթիվ հարցերի ու խնդիրների լուծմանը:

Դիվանագիտությանը հայտնի են բազմաթիվ դեպքեր, երբ դիվանագիտական փաստաթղթերի կամ պաշտոնական հաղորդագրությունների լեզվական ձևավորման անփութության պատճառով ոչ միայն թուլորիմացություններ, այլ նույնիսկ միջադեպեր են տեղի ունեցել: Սա է պատճառը, որ դիվանագիտական փաստաթղթերի պատրաստման նկատմամբ հատկապես խիստ պահանջներ են դրվում (ուղարկված փաստաթուղթը փոխել, ուղղել կամ հետ կանչել գործնականում անհնար է):

Եզրակացություն

Այսպիսով՝ հիմնվելով դիվանագիտական փաստաթղթերի վերլուծության վրա՝ հանգել ենք այն եզրակացության, որ այդ տեքստերին բնորոշ են փաստարկվածության և ճշգրտության համար անհրաժեշտ լեզվական և շարահյուսական տարբեր միջոցների առկայությունը, որոշչային կառույցներն ու արտահայտությունների սեղմության այլ միջոցներ (դերբայական դարձվածներ, բայի անդեմ կառույցներ), կարճ նախադասությունների գերակշռությունը: Դիվանագիտական դիսկուրսի տարբերակիչ գծերն են խոսքի յուրօրինակ դարձվածքները կամ դիվանագիտական շփումներում ընդունված հատուկ դիսկուրսային բանաձևերը: Որպես կանոն՝ դրանք դիմելաձևերն են, հաճոյախոսությունները, անունները ճիշտ գրելը, հնչեցնելը և այլն: Դիվանագիտական դիսկուրսում լեզվական տեսանկյունից օգտագործվում են հաղորդակցման տարբեր ռազմավարություններ և մարտավարություններ: Զանի որ խոսքի ներգործության լեզվաբանական վերլուծության հիմնական խնդիրն առնչվում է խոսողի ռազմավարությունների և նրա տրամադրության տակ եղած լեզվական բոլոր միջոցների ուսումնասիրմանը, որոնցով պայմանավորված է նրա՝ հաղորդակցական նպատակին հասնելը, ապա դիվանագիտական դիսկուրսի ուսումնասիրությունն անհնար է առանց հաղորդակցության վերլուծության:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ալթունյան Կ. «Անձնակազմի կառավարումը և կադրային պահանջարկի ձևավորումը», *Գիտական Արցախ*, №4 (19), 2023:
2. Ammon, Royce J. *Communication and Diplomacy*. Jefferson, North Carolina: McFarland & Company, 2001.
3. Crystal, David. *The Cambridge Encyclopedia of the English Language*. Cambridge: Cambridge University Press, 1995.
4. Dontcheva-Navratilova O. "Politeness Strategies in Institutional Speech Acts", *Discourse and Interaction. Brno Seminar on Linguistic Studies in English: Proceedings*, 2005. pp. 14-25.
5. Wheeler, N. *Trusting Enemies: Interpersonal Relationships in International Conflict*, New York: Oxford University Press, 2018.
6. United Nations. *United Nations Correspondence Manual*, A guide to the drafting, processing and dispatch of official United Nations communications, New York, 2000.
7. Володина Л.В., Карпухина О.К. Деловое общение и основы теории коммуникации. Санкт-Петербург, 2002.
8. Демьянков В.З. «Политический дискурс как предмет политологической филологии. Политическая наука». *Политический дискурс: история и современные исследования*. Москва, 2002, № 3, стр. 32.
9. Попов В.И. *Современная дипломатия: теория и практика. Дипломатия – наука и искусство*, курс лекций 2-е изд., доп. М.: Международные отношения, 2004.
10. Терентий Л.М. «Дипломатический дискурс как особая форма политической Коммуникации», *Вопросы когнитивной лингвистики*, N 1. Тамбов, 2010. стр. 47-57.

WORKS CITED

1. Alt'unyan K. *Andznakazmi karravarumy yev kadrayin pahanjarki dzevavorumy*, Gitakan Arts'akh, №4 (19), 2023 [Personnel Management and Personnel Demand Formation] (in Armenian).
2. *United Nations Correspondence Manual*, A guide to the drafting, processing and dispatch of official United Nations communications, United Nations, New York, 2000 (in English).
3. Volodina L.V., Karpukhina O.K. *Delovoye obshcheniye i osnovy teorii kommunikatsii*. Sankt-Peterburg, 2002. [Business Communication and the Basics of Communication Theory. St. Petersburg] (In Russian).
4. Demyankov V.Z. *Politicheskii diskurs kak predmet politologicheskoy filologii, Politicheskaya nauka. Politicheskii diskurs: Istoriya i sovremennyye issledovaniya*. Moskva, 2002. № 3. S. 32 [Political Discourse as a Subject of Political Science Philology, *Political Science. Political Discourse: History and Modern Research*] (In Russian).
5. Popov V.I. *Sovremennaya diplomatiya: teoriya i praktika. Diplomatiya - nauka i iskusstvo: Kurs lektsiy 2-ye izd., dop. M.: Mezhdunarodnyye otnosheniya*, 2004. [Modern Diplomacy: Theory and Practice. Diplomacy - Science and Art] (In Russian).
6. Terenty L.M. *Diplomaticheskii diskurs kak osobaya forma politicheskoy Kommunikatsii, Voprosy kognitivnoy lingvistiki*, N 1. Tambov, 2010. c. 47-57 [Diplomatic Discourse as a Special Form of Political Communication, *Issues of Cognitive Linguistics*] (In Russian).

LINGUO-COMMUNICATIVE CHARACTERISTICS
OF DIPLOMATIC DISCOURSE

VARDUHI GHUKASYAN

YSMU, Chair of Foreign Languages, lecturer,
Yerevan State University, Faculty of European Languages and Communication,
English Philology Chair, Ph.D. Student,
Yerevan, the Republic of Armenia

The purpose of the presented article is to give a linguistic description of diplomatic documents. Currently, the interest in the study of diplomatic discourse from a linguistic point of view is growing more and more, because its linguistic features are important for the study in terms of developing effective international interaction. The importance of the linguistic analysis of diplomatic discourse in all spheres of international relations is undeniable, and the task of forming a common diplomatic culture in the conditions of globalization is more relevant today than ever.

To achieve this goal, the following research tasks were set: to classify and describe the features of discursive genres of diplomatic documents; to analyze the linguistic features of diplomatic documents.

The objectives of the study and the specifics of the analyzed material determined the choice of the following research methods as the main ones: the method of direct observation of the material, followed by analysis and generalization of the results; contextual-interpretive method; intent analysis method; content analysis method.

The main conclusion made within the framework of the study is that the style of diplomatic writing varies depending on the language and traditions of different countries, but is still subject to some general rules that are defined by international practice and

conventions. Diplomatic documents must convey the state's point of view and insufficient attention to language can seriously damage the relationship between the countries.

Keywords: *diplomatic letter, diplomatic discourse, diplomatic communication, international relations, communication process, international documents, diplomatic language, personal note, verbale note, memorandum.*

ЛИНГВОКОММУНИКАТИВНЫЕ ХАРАКТЕРИСТИКА ДИПЛОМАТИЧЕСКОГО ДИСКУРСА

ВАРДУИ ГУКАСЯН

*преподаватель кафедры иностранных языков
Ереванского государственного медицинского университета,
соискатель кафедры английской филологии
факультета европейских языков и коммуникации
Ереванского государственного университета,
г. Ереван, Республика Армения*

Целью представленной статьи является лингвистическая характеристика особенностей дипломатических документов. В настоящее время интерес к изучению дипломатического дискурса с лингвистической точки зрения все больше растет, поскольку его лингвистические особенности важны для изучения эффективного международного взаимодействия. Важность лингвистического анализа дипломатического дискурса во всех сферах международных отношений неоспорима, а задача формирования общей дипломатической культуры в условиях глобализации сегодня актуальна как никогда.

Данная цель обуславливает необходимость постановки и решения следующих исследовательских задач: описать особенности дискурсивных жанров дипломатических документов; проанализировать языковые особенности дипломатических документов.

Задачи исследования и специфика анализируемого материала обусловили выбор следующих методов исследования в качестве основных: метод непосредственного наблюдения материала с последующим анализом и обобщением результатов; контекстуально-интерпретационный метод; метод интент-анализа; метод контент-анализа.

Главный вывод, сделанный в рамках исследования, состоит в том, что стиль дипломатической переписки варьируется в зависимости от языка и традиций разных стран, но все же придерживается некоторых общих правил, которые определяются международной практикой и конвенциями. Дипломатический документ должен отражать точку зрения государства, а недостаточное внимание к языку может серьезно повредить отношениям между странами.

Ключевые слова: *дипломатическая переписка, дипломатический дискурс, дипломатическое общение, международные отношения, коммуникативный процесс, международные документы, дипломатический язык, личная нота, вербальная нота, меморандум.*